

**ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ  
ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ «ԷՐԵՐՈՒՆԻ ԵՐԵՎԱՆԻ» ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 2800-  
ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ**

**Միրելի՛ երեւանցիներ**

**Երեւանի հարգելի՛ քաղաքապետ եւ ավագանու անդամներ**

**Շնորհավորում եմ բոլորիս Երեւանի օրվա կապակցությամբ:**

Հայոց մայրաքաղաքն իր հիմնադրման 2800-ամյակն է նշում, եւ օրը տոնական է ոչ միայն երեւանցիների, այլեւ համայն հայության համար, քանզի Երեւանը դեպի իրեն է ձգում աշխարհի բոլոր ծագերում բնակվող հայերին, համախմբումամենքիս, իսկ հեռացողին՝ նորից կանչում Հայաստան:

Գնահատենք ու մեր հարգանքը մատուցենք բոլոր նրանց, ովքեր հիմնել ու կառուցել են մեր սիրելի Երեւանը, մասնակցել նրա շինարարությանը, կերտել նրան բնորոշ ուրույն քաղաքային կոլորիտն ու այսօր էլ շարունակում են ամբողջացնել նրա կերպարը:

Իսկ քաղաքի դեմքն առաջին հերթին իր բնակիչներն են, որոնք պետք է պահպանեն այդ դիմագիծը, խնամքով վերաբերվեն մեր հանրապետության «սրտին»:

Հայաստանի մայր քաղաքին իր հիմնադրման այս լուսավոր տոնին մաղթում եմ առավել սրընթաց բարգավաճում, զարգացում, անմոռանալի իրադարձություններով լի առօրյա, իսկ երեւանցիներին ու քաղաքի հյուրերին՝ բարձր տրամադրություն ու բարօրություն:

**Շնորհավո՛ր տոնդ, Երեւան:**

**21.10.2018թ.**